Դարձեալ վարում էր եգնամոլին,
Վերվերում, ցնծում էր աքոռակին,
Սակայն սայլիկն այն չէր շարժում,
Բայց անիւն այն չէր ընթանում:
Առեղից շարժում առած անիւն սայլի,
Այսօր անուշահոտ բուրմամբ ընթանում է:
Սայլը Սինայում
Երկրորդ օրէնքն է Մովսէսի,
Իսկ այն հարիւր բարդ խոլրձանն
Դրանք նահապետներն են, մարգարէները
Եւ այն վեց բարդ կորնկան՝
Աստծու վեցօրեայ գործերն են
Եւ այն միակ մանուշակը՝
Միաւորուած երրորդութիւնն է,
Իսկ այն մանուկը խարտեշագեղ
Նա Յովհաննէս Մկրտիչն է
Եւ այն չորս անիւները սայլի՝
Աւետարանն է Քրիստոսի:
Գլգլում էր, գլգլում, սայլիկը գլգլում.
Մասիսի աջ կողմից
Սայլիկը գլգլում գալիս էր, գլգլում
Եւ ճռնչալով գալիս մտնում էր նոր
Երուսաղէմ,
Իսկ որդիները նոր Սիոնի,
Որոնք երգում էին այս ասելով.
- Փա՜ռք, Քրիստոսի ամենազօր
յարութեանը:

ԿԱՐԱՊԵՏ ՍՈՒՔԻԱՍԵԱՆ

ՏԱՂ ՅԱՐՈՒԹԵԱՆ

Փա՜ռք Քրիստոսի ամենազօր յարութեան:
Սայլը կ'իջնէ Մասեաց լեռնէն.
Անոր վրայ արուներ կան,
Անոր վրայ ոսկի գահեր,
Անոր վրայ կան բեռներներ ծիրանի,
Անոր վրայ արքայորդին,
Որուն աջ կո՛ղմն են վեցրեւեան սերովբէներ
Ու ձախ կողմը հերովբէներ բազմաչեայ:
Իր աւջեւը կան սիրուն մանուկներ՝
Տէրունական խաչն իրենց գիրկին մէջ.
Զեռքերնին քնար ու սաղմոսարան,
Կ'երգէին ու կ'ըսէին.
Փա՜ռք Քրիստոսի ամենազօր յարութեան:
Բերած են նոն սայլիկն են բերած,
Բերած կեցուցած.
Մասիսի աջ կողմէն
Բայց սայլիկը չէր շարժեր,
Բայց անիւը չէր խաղար:

digitised by A.R.A.R.@

Հարիւր բարդ նո՛ն կայ խոլորձ, վե՛ց բարդ կորընկան,
Իսկ մէ՛կ մանուշակ ան խուրձին վրայ:
Մասեաց աչ կողմէն
Սայլիկը բերա՛ծ են ու կեցուցած,
Բայց սայլիկը չէր շարժեր,
Բայց անիւը չէր խաղար:
Անոր սամիին արծաթէ են, լուծն ոսկի,
Սամոտիին ալ ապրիշիմի,
Փոկեր են շարած հոյլ հոյլ մարգարտով.
Բայց սայլիկը չէր շարժեր,
Բայց անիւը չէր խաղար:
Ձորս մը կայ հոն՝ ճօճ ու հապուկ
Ուռամիջակ՝ հաստաբազուկ՝
Լայն թիկունքով՝ խարտիշազեղ՝ անեղազոչ,
Որ կը ձայնէր եզնամոլին՝
Կանչ հանելով արոտին մօտ:

Եզները սայլին սար են ու սպիտակ,
Ծաղկի խայտուցքով՝ արագաթայլ եւ ընթացող.
Անէն եղջիւրնին խաչի նմանութեամբ,
Անէն մազերնին հոյլ հոյլ մարգարտով.
Եւ ահա սայլիկն ըսկսաւ շարժիլ,
Եւ ահա անիւն սկսաւ խաղալ.
Երբ սայլին կուրծքը շարժեցաւ առեղէն՝
Ան կը ձայնէր եզնամոլին:

Սինայէն իջած սա՛յն օրէնքն էր Մովսէսին.
Ու հարիւր բարդ խոլորձը
Նահապետներն են մարգարէ.
Այն կորընկանք *վեց բարդը*
Վեցօրեայ գործքն է Աստուծոյ.
Այն մէկ հատիկ մանուշակը
Երրորդութիւնն է միաւոր.
Խարտիշազեղ այն մանուկը
Սուրբ Յովհաննէս Մկրտիչն է.
Սայլին կուրծքն ալ խառակուսի
Աւետարանն էր Քրիստոսի:

Գիլ գիլ կուգար սայլիկը գիլ
Մասեաց աչ կողմէն,
Սայլիկը գի՛լ կուգար գիլ
Ու ճրագնչալով կուգար կը մտնէր սուրբ Երուսաղէմ.
Եւ Սիոնի նոր զաւակներն երգելով նո՛ր երգ՝ կ'ըսէին.
Փա՜ռք Քրիստոսի, այսօր իրմէ արձակուեցանք:

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ

(Աշխարհաբար, Առաջին թարգմանութիւն,
«ՍԻՈՆ» 1934)

digitised by A.R.A.R.@